

Ռուբեն Ս. Անգալադյան
(Սանկտ Պետերբուրգ)

ՆԱ, ՈՐ ՕՐԸՆՈՒՄ ԷՐ ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Արա Շիրազի ցուցահանդեսի առիթով*

Բանալի բառեր – Արա Շիրազ, ցուցահանդես, տաղանդ, պատասխանատվություն, գեղարվեստական կյանք, նկարիչ-վաթսունականներ, դիմաքանդակային կոմպոզիցիա, իրական գեղեցկություն, հայկական մշակույթ:



Արա Շիրազը Փարաջանովի գլխաքանդակի մոտ

Ինձ համար, և իրեն մտերիմ մարդկանց համար նույնպես, Արա Շիրազը եղել ու մնում է որպես առեղծված: Երեք տարի առաջ (2014 թ.) հեռացավ կյանքից՝ այդպիսով խիստ դառնացնելով իր ընկերներին և իր բարդ արվեստի բոլոր գնահատողներին:

Բուն անուն-ազգանունով՝ Արամազդ Կարապետյան. այսպես է ներկայացվում Արա Շիրազը Նկարիչների միության բոլոր տեղեկատուներում, որի նախագահին էր նա վերակառուցման տարիներին: Եվ դա, ինչպես երևում է, պատահական չէր: Արտաքուստ հաջողակ ու երջանիկ՝ ամբողջ կյանքից նա առանձնացնում էր քարքարոտ հողի նրբագույն պտուղները, ամպերն ու Արարատի ամպոտ բարձունքները, իր հոր՝ Շիրազի տեսանելի հոգին, Փարաջանովի կերպարը, Չարենցի ասպետականությունը, Սարոյանի պարզությունն ու խորությունը, Աշոտ Հովհաննիսյանի համառ աշխատասիրությունը: Այս բոլոր մարդիկ քանդակային

դիմապատկերներ են՝ Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Շիրազի աշխատանքները: 2017 թ. նոյեմբերի 18-ից մինչև տարեվերջ Հայաստանի ազգային պատկերասրահում ներկայացված՝ այդ աշխատանքների մասին է մեր հետագա խոսքը:

Իր սեփական կյանքի պլեկոծվող ծովի կողքին Ա. Շիրազը որպես ուղեվար է վերցրել Ղևոնդ Ալիշանի (1978-1979)՝ տարեգրի և Հայաստանի մասին ամեն ինչ իմացող, բայց երբեք հայրենիքում չեղած մարգարեի միայնակ նավակը: Իսկ հիմա մտնենք աշնանային մշուշապատ այգիները: Այդ այգիներում Տերյանի (1981)

Ռ. (ժԵ) Գաբրի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017
վ.վ. համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.11.2017:

միայնակ թաքուն կրակն է. այդպես են ես տեսնում մեծ գրողի քանդակը: Այս օրերի ամբողջ եռուզեռից Ա. Շիրազը պատկերել է երկու աղջնակ՝ իր դուստրերին, ոչ այն է՝ գայլի, ոչ այն է՝ շան երեսի առաջ (սա անհայտության խորհրդանիշն է, անպաշտպան կյանքի կերպարը), և այդ շուն-գայլի երախում՝ հայկական հրաշալի խաղողի ողկույզը...

Ստեղծագործությունը ազգի կյանքում տաղանդի ծնվելու հնարավորությունն է, դա ճանաչողության միակ ուղին է, դա արիության ու բարության դրվածքն է, ինչն էլ և ամենաազնիվ աշխատանքն է աշխարհում: Արա Շիրազը հինգ տարի առաջ մի արտահայտություն նետեց. «Ես չգիտեմ՝ ով են ես»... Սրանում է իր ողջ պոռթկումը, որոնումը, ճանաչողության պատմեշը գեղարվեստական խորհրդանշանների աշխարհում, որ ապրում են նրա թախծող, միայնակ հոգում: Այս բառերի մեջ նրա մատների պարն է, նրա զգացմունքների ռիթմը, նրա երևակայության զարկերակը, նրա կամքի էներգիան՝ խիստ, նյարդային, նրբագույն և իմաստուն: Կավն ու մոմանյութը փնտրում ու գտնում են նրա մտքի ուժը, նրա ցեղի արյունը, դեպի ապագան թռչող հոգու ջերմությունը:

Նա Հայաստանի գեղարվեստական կյանքի համատեքստ մտավ պարզ և անակնկալ ձևով: Ոչ ոք չհարցրեց՝ ինչպես երկու ցայտուն գրողներից ծնվեց քանդակագործ՝ տարածության մեջ ձևի բանաստեղծ, մաքուր և անզիջում երգիչ: Արա Շիրազ արարիչը սեփական ձեռքերից, իր սևեռուն, ուսումնասիրող հայացքի խորքից, կյանքի հանդեպ անհուն հավատի բնապատկերից բաց չի թողնում իր սերը հասարակ մարդու հանդեպ, այն հողի հանդեպ, որի անունը ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՇԽԱՐՀ է:

Նրա աշխատանքները ինձ հայտնի են դեռևս 1960-ական թվականների վերջերից: Նրա ստեղծագործությունը սկզբից ևեթ ինձ վրա ուժեղ ազդեցություն է թողել: Բայց տարիների ընթացքում քանդակագործը դառնում էր ավելի շղթայագերծ, մեծահմուտ: Ձևն առաջացավ դյուրաբար և բնականորեն: Արա Շիրազը երկար տարիներ ինձ համար ամեղծված էր մնում միայն այն պատճառով, որ ես խուսափում եմ հանրահայտների երեխաներից, որոնք կյանք, արվեստ են մտնում ոչ իրական դոճներով: Եվ, որպես կանոն, մնում են հանրահայտների երեխաներ:

1974 թվականին նրա մայրը՝ հայտնի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, հարցրեց ինձ. «Իմ Արայիկն իսկապես տաղանդավոր է»: Ես պատասխանեցի, որ նրա աշխատանքներն ինձ դուր են գալիս, սակայն իսկական քանդակագործ դառնում են հիսուն տարեկանից հետո: Անցան տարիներ, մինչ ես ծանոթացա այդ համեստ, քաջարի և իմաստուն մարդու հետ: Ծանոթության յուրաքանչյուր նոր փուլի հետ ես ավելի ու ավելի էի հասկանում նրան, մտնում նրա զգայուն և խոցելի աշխարհը, դատողությունների ճշգրիտ տրամաբանության մեջ: Արայիկը, ինչպես որ ամեն մի իսկական արարիչ-քանդակագործ, չոր, խոցելի, մարդ էր, որ կարողանում էր անջրպետվել ընդդիմախոսներից: Նրանում հսկայական կամք կար, իմպուլսիվություն, նկարչի գործնականություն և օտարացնող կամ մտերմացնող սուր հեգնանք: Նա կարողանում էր հարգել ուրիշի տեսակետը, ուրիշի կյանքը ու կարողանում էր ճիշտ և ըստ արժանվույն գնահատել արարչի ստեղծագործության բնօրինակը, հատկապես եթե դա վերաբերում էր մեր ժամանակակցին: Նրա մեջ չկար ստեղծագործական խանդ, նրա մեջ կար քննարկման պարզություն:



Ղևոնդ Ալիշան

Քանդակագործ Արա Շիրազը կարողանում էր իր վրա պատասխանատվություն վերցնել, կարողանում էր տեսնել ընդհանուրը, ուրախանում էր իր ընկերների հաջողություններով: Ինքն էլ շարունակում էր զարգանալ որպես անհատականություն և արարիչ:

Մի անգամ մեծն Ա. Բուրդելը հարցրեց աշակերտներին. «Ինչից է, որ բնության կողքին միշտ գիտելիք է պակասում: Ինչից է, որ նրա առաջ նկարիչը միշտ անգետ է»: Բուրդելին չգոհացրին երիտասարդների պատասխանները: Նա պարզաբանում է. «Նրանից է, որ նա չի կարող լինել բավականաչափ մաքուր և անկեղծ: Նրանից է, որ նա ընդունակ չէ մոռանալ այն ամենը, ինչով լցրել են իր գլուխը: Պետք է կարողանալ հայել երեխայի վճիտ, ամենագետ աչքերով»²... Այս ամեն վարպետը շարունակում է. «Բնականաբար, ես նկատի չունեմ տեխնիկական կողմը, որ պահանջում է ճարտարություն և վարժություններ» ես խոսում եմ այն տեսիլքի մասին, որ մի տեսակ ծնվում է նրա հետ և պետք է անընդմեջ աճի ու զարգանա մեր մեջ: Նկարը պետք է «ներքին» լինի ոչ միայն թղթի վրա, այլև մեր մեջ»³:

Այսպիսին է Ա. Շիրազի ձեռագիրը: Նրա աշխատանքները գեղարվեստական անհատականության կնիքն են կրում: Իր ծնողների ազգային հանրածանոթության բեռի ներքո նա չդարձավ երեքուն, ամբարտավան, ինքնահաստատման համար չօգտագործեց նրանց անունը: Ավելին, նա առավել հավաք դարձավ, առավել պահանջկոտ՝ իր նկատմամբ: Արա Շիրազը նպատակային, կամային մարդ ու արարիչ էր, որի ներդրումը Հայաստանի մշակույթի մեջ դեռ կգնահատվի ամբողջ թափով: Իմ կարծիքով՝ արվեստում նա իր ծնողներից բարձր էր, թեև ստեղծագործության մեջ՝ հռչակի առումով գիջում էր նրանց:

Արա Շիրազը ծնվել է 1941 թ. հունիսի 8-ին, Երևանում (Հայաստանի մայրաքաղաքում ծնված սակավաթիվ վաթսունականներից մեկը): 1960-ականների կեսերին նա ավարտեց Գեղարվեստաթատերական ինստիտուտը: Խորհրդանշական է, որ Արայիկի դիպլոմային աշխատանքը հղի կնոջ կերպարն էր (սոր կյանքի սկիզբը): Նրա ստեղծագործական ճանապարհը սկսվում է ուսանողական նստարանից, երբ Ե. Քոչարը տիրում էր երիտասարդ նկարիչ-վաթսունականների ուղեղներին: Այն ժամանակ երիտասարդության վրա ուժեղ ազդեցություն էին թողել գրող և գեղապաշտ Կոստան Զարյանը և կինոռեժիսոր Սերգեյ Փարազյանովը: Այս բոլորն արտացոլվում էին գեղարվեստական մտքի կայացման մեջ, Երևանի գեղարվեստական միջավայրի ու գեղարվեստական պատկերի մեջ: Երիտասարդ նկարիչն իր վաղ աշխատանքներում հետ է մղվում իր նախնական փորձի երկու հիմնական աղբյուրների փոխակերպությունից՝ սյուրռեալիզմից և հայ գեղարվեստական ավանդույթից: Դա առաջին հերթին հայկական գրքային մանրանկարչությունն է և Հայաստանի ճարտարապետության մեջ արտացոլվող քանդակի արվեստը:

Դեռևս ճանապարհի սկզբին նա որպես իր ձակատագիր զգում էր հարաշարժորեն զարգացող և ծաղկող Երևանը՝ որպես վայր, ուր ինքն արարելու է: Քաղաքն աչքի առաջ վերափոխվում էր՝ դառնալով հսկայական սոցիալիստական կայսրության մշակութային առաջատար մայրաքաղաքներից մեկը: Դա ամենից լավ տեսնում ու զգում էր հենց Արա Շիրազը, քանզի ձակատագիրը նրան տեղավորել էր իրադարձությունների խաչման կետում, որտեղ կարևոր դեր խաղացին նաև նրա ծնողները:

Գեղարվեստական տաղանդավոր երիտասարդության մի մասը Շիրակից էր, մյուսը՝ Թիֆլիսից, և միայն փոքր մասն էր Ռուսաստանից ու Բաքվից: Այդ տասնամյակում Հայաստանը և հայ ժողովուրդը գիտության, մշակույթի, սպորտի շատ բնագավառներում իսկական վերելք էին ապրում: Հիշենք թեկուզև Բյուրականի

1 Эмиль Антуан Бурдель, Искусство скульптуры. М. 1968, с. 147 [Emil' Antuan Burdel'. Iskusstvo skul'ptury. M., 1968].

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

գիտնականներին, Եվրոպայի ամենամեծ արագացուցիչը, Մաթեմատիկական մեքենաների ինստիտուտը, տեխնիկայում և տեխնոլոգիայում նշանավոր ձեռքբերումները, Զարա Դոլովխանովային, Լեոնիդ Ենգիբարովին, Տիգրան Պետրոսյանին, Շառլ Ազնավուրին, Լիլիթ Չուգասգյանին, Քեթի Բերբերյանին և Արշիլ Գորկու արվեստի միանգամայն նոր բացահայտումը...

Եվ կրքերի ողջ շիկացումը, այդ ժամանակի ոգեշնչվածությունը, թե ինչպես էր նշվում Էրեբունի-Երևանի 2750 ամյակը ուժեղագույն ազեցություն ունեցան ամբողջ սերնդի, այդ թվում Արա Շիրազի վրա: Նրա արհեստանոցում, նկարիչ-ընկերների արհեստանոցներում, նրա ծնողների տներում (որոնք վաղ էին բաժանվել) ամբողջ ժամանակ քննարկվում էին ազգային մշակույթի կարևորագույն հարցեր: Այստեղ գալիս էին գիտնականներ ու գրողներ, նկարիչներ ու ճարտարապետներ, ինժեներներ և բժիշկներ: Սփյուռքի հետ կապը դարձավ ավելի խոր և ինտենսիվ: Այդպես, ամբողջ Երևանը, ողջ հայ ժողովուրդը աստիճանաբար վերածվում էր մեկ տան, մեկ ամբողջի: Մշակույթը տիրեց գիտնականների, երաժիշտների, բժիշկների, իրավաբանների, գրողների միտքը. Հայաստանում և ԽՍՀՄ-ում հայտնվեցին ճանաչված կոլեկցիոներ-հայեր, ժամանակակից արվեստ հավաքողներ՝ Ա. Թախտաջյան, Ա. Ալիխանյան, Ա. Աբրահամյան... Սփյուռքը նույնպես ակտիվորեն սկսեց գնել վաթսունականների արվեստը: Հայկական ժամանակակից արվեստով տարվեցին մոսկովյան ու լենինգրադյան ինտելեկտուալները, ԽՍՀՄ երևելի մարդիկ՝ Ե. Գրոսսը, Մ. Պլիսեցկայան, Ի. Էրենբուրգը, Ե. Եվտուշենկոն և շատ ուրիշներ:

Երիտասարդ գեղարվեստական միջավայրի ներսում հայտնվեցին սեփական արվեստաբանները՝ Հ. Իգիթյան, Ն. Ստեփանյան, Մ. Միքայելյան, Է. Գայֆեջյան, Պ. Հայթյան... Հենրիկ Իգիթյանը հիմնադիրը դարձավ Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի, որն առաջինն ու միակն էր ԽՍՀՄ տարածքում և ամբողջ սոցճամբարում:

Նկարիչ-վաթսունականները նորարարության նույնիսկ չափավոր ձևերում պաշտոնական մշակույթին և գաղափարախոսությանը որևէ տեսակի զիջումների չգնացին: Հայ նկարիչներն իրենց արվեստը ռուս նկարիչների նման չքաղաքակա՛նացրին և իրենց չհակադրեցին Մոսկվային ու ռուս ժողովուրդին, ինչպես մերձբալթիկացիները: Նրանք ընդունում և ընկալում էին իրենց ընդհատված կապը հին և միջնադարյան ազգային մշակույթի հետ: Իսկ այդ կապն ընդհատվել, կորսվել էր հազարամյակով, ինչպես որ ազգային գեղագիտական մտածողության համակարգը: Պարզ ասած՝ ազգային մշակույթը դեպի իրական արժեքներ շարժելու համար ստեղծվել էին բոլոր պայմանները, և նկարիչները նետվեցին արարելու համար այդ բարենպաստ տարածության մեջ:

Վաթսունականների վերջերին և յոթանասուներորդականների սկզբին Արա Շիրազն իր մասին հայտնեց հետաքրքիր կոմպոզիցիաներով և հիանալի դիմանկարների շարքով, որոնք բացահայտում էին ժամանակակցի կերպարը, հայկական քանդակագործության մեջ նրա բանաստեղծական ուղղությունը: Այդ առնչությամբ հիշվում են այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ «Պարթ Պիկասո» (1971), «Երվանդ Քոչար» (1974), «Էդուարդ Խարազյան» (1971)... Հետագայում կզան Վիլյամ Մարոյանի (1984), Վահան Տերյանի (1976), Առնո Բաբաջանյանի (1983) դիմապատկերները...

Յուրաքանչյուր կերպարի բուն էությունը բանաստեղծական վիճակ է՝ մոտ փոխաբերությանը, այսինքն՝ բնավորության զանազան գծերի հակադրություն է ինչ-որ խորհրդանշական փոխադարձ կապի մեջ, որոշակի ազատ դիմամիկայի մեջ: Ներքին ողբերգականությունը և նուրբ քնարականությունը կենդանացնում են այդ կերպարները: Նա ստեղծում է իր հերոսների բնավորությունները՝ մաքրագույն ազնվականության վրա հունցված: Եվ տաղանդի այդ հատկությունը Շիրազին մերձեցնում է նրա ժամանակակից-քանդակագործ Ե. Կոջարաշյանի դիմա-

պատկերներին:

Բարձունքները հանդարտ են: Ամպերը նրանց բերում են ձյան մաքրությունն ու ծանրությունը: Վարպետի քանդակներում եղած լռությունը վերին որոնման լռությունն է, իր իմաստավորումը այս աշխարհում: Մեր ստեղծագործական բարձունքները, արվեստում ազգային բարձունքները՝ մշակույթի պատմության մեջ մտած, ասես ՄԱՐԴՈՒՆ և ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ինքնամոռաց ծառայության բաց էջեր են, Արա Շիրազի համար կա իր ճակատագրի միակ ուղին, որում ամփոփված է ստեղծագործության պարադոքսային միտքը՝ փորձել անմահություն տալ վաղանցիկ զգացմունքին: Այդպես առաջանում է Չարենցի՝ ասպետի ու բանաստեղծի կերպարը, որի կենսական ու բանաստեղծական սխրանքը գաղտնիքներով լի է: Նկարչի քանդակներում նա հառնում է որպես հոգնած, նյարդային, միամիտ ու բաց մարդ: Նա շատ անգամներ է դիմել բանաստեղծի հակասական կերպարին: Ահա՛ Չարենցը անտուն, որը երեխաների հետ, ասես անտուն Հայաստանի հետ, ասես բարձր թողի ապագայով:

Առնո Բաբաջանյանի դիմաքանդակային կոմպոզիցիան լիովին տարբեր է Չարենցի նկարագրված արձանախմբից: Այստեղ ուրախ տրամադրությունը ամրացնում է երեխան, որի ազատ, շատ բաց ու կայտառ տրամադրությունը հակադրվում է երաժշտի կենտրոնացած, ոգեշնչված վիճակի հետ: Աշխույժ ու շատ մտերիմ-անձնական դրությունը բացում է ականավոր կոմպոզիտորի և դաշնակահարի ինքնախորամուխ և միննույն ժամանակ շատ բնութագրական, հասկանալի մարդկային, յուրաքանչյուր մարդուն մերձավոր աշխարհը: Կոմպոզիցիայի մեջ, ֆիզուրների հարաշարժության մեջ երաժշտական պահ կա, զվարթագին նոտա կա:

Կոմպոզիցիոն բնույթի աշխատանքներում տեսանելի է 20-րդ դարի սկզբի արվեստի հետ արտաքին ասոցիատիվ կապը: Այս գեղանկարչական գիտափորձը հինգ հարյուր տարվա հսկա փուլի ամփոփումն էր: Արա Շիրազի իննսունականների սկզբի կոմպոզիցիաները՝ «Արքա», «Խաչելություն», արտացոլում են արվեստի զարգացման համաշխարհային ուղղվածությունը. նա խնամքով, նպատակալացորեն փորձում է միավորել, համադրել մարդկային աշխարհը, բարձր բարոյակա-նությունը, տեսանելի կերպարի հոգևորությունը և ավարտունությունը:

1960-ական թվականների գործիչների ողբերգական ճակատագրերը արտացոլված են նրա քանդակագործական կերպարներում որպես բարձրագույն առաքելություն, որպես ազնվության նմուշ: Հովհաննես Շիրազի (1999), Պարույր Սևակի (1972), Վրույր Գալստյանի (1982), Սիլվա Կապուտիկյանի (2009), Սերգեյ Փարաջանովի (1998), Աշոտ Հովհաննիսյանի (1983) դիմապատկերները... Ցուցակը կարելի է շարունակել: Ժամանակակիցները հետաքրքրում էին քանդակագործին, նա անընդմեջ երկխոսություն էր վարում նրանցից յուրաքանչյուրի հետ՝ նրանց կերպարներում գտնելով ժամանակի մոլեխնդումները, կարևոր խորհուրդ, որ անհրաժեշտ է փոխանցել հաջորդ սերունդներին: Եվ այստեղ օգնել է ծեփագործման յուրաձևությունը,



Պարույր Սևակ

քանդակագործական կերպարների մշակվածքը՝ իմպուլսիվ, նյարդային, անկեղծ ու թեթև...

Արա Շիրազը Հայաստանում ոչ միայն հին պատմություն էր տեսնում, ոչ միայն ոգու մեծություն, այլև թերություններն ու ձևախախտումները: Նա նվիրված էր զարգացման այդ գեղարվեստական տրամաբանությանը, այդ քարքարոտ ու քամիների առաջ բաց բնապատկերին, նույն ինքը՝ ժամանակի՝ նույն ինքը՝ Հայաստանի հետ վեճին՝ մինչև խռովության, մինչև կաթվածի հասնող: Այդպես նա հեռացավ կյանքից՝ Հայրենիքի, Ապագայի, նրա Մշակույթի տագնապով:

Իսկական բարձր մշակույթի մեջ չկա և չի կարող լինել հայրենամոլություն՝ որպես բովանդակություն, ավելին, ԲԱՐԻՆ ու ՉԱՐԸ հավասարաթեք են արարչի համար և նույնքան էլ արժեքավոր: Մշակույթը իր զարգացման մեջ չի կարող լինել ագրեսիվ, որպիսին գեղարվեստական ստեղծագործության բովանդակության ներսում հայրենամոլության զգացումն է: Զգացումների ռեգիստրը, կողպված հայրենամոլության նշանի կամ խորհրդանշանի մեջ, չափազանց նեղ է նկարչի համար, չափազանց հարթ: Այս տողերը գրում եմ՝ հասկանալով, որ Արա Շիրազի ստեղծագործության հետ դրանք ընդամենը անուղղակիորեն են կապվում: Բայց արարչի ճակատագիրն ու աշխարհայացքը հասկանալու համար այս մտքերը որոշիչ են:

Մակայն վերադառնանք Արարչի ստեղծագործությանը, անցնենք ոչ մեծ արհեստանոցով, որտեղ եռաժանիներից, մետաղալարերից, աստիճաններից հյուսված են լարված, երբեմն՝ ողբերգական, երբեմն՝ թեթև տխրությամբ կերպարներ ու դեմքեր: Եվ այստեղ վերլուծության, ծեփագործության ու ոճի նրա հակասականությունը ինչպես արվեստի, այնպես էլ մարդկության ճակատագրով խորապես մտահոգված մարդու ծավալուն կերպար են հյուսում: Ահա՛ նրա աշխարհը: Դուրս գանք աշնանային Երևան, կանգ առնենք նրա աշխատանքների առջև, իմաստավորենք նրա տեղը սիրելի քաղաքում: Քանդակագործի հենց հասարակական աշխատանքներում է կերպարվեստի լեզուն հրապարակախոսությունից մինչև կերպարների փիլիսոփայական իմաստավորման հասնում: Ահա «Դվին» (1979) հյուրանոցի ճակատին մենք տեսնում ենք նախշավոր գարդանկար, որ զուգորդվում է հայկական ժապավենների հետ: Կամ էլ Սյամնիկյանի արձանը (1980)՝ դասական, խիստ և ռազմիկի ու պետական գործչի բաց կերպար:

Քաղաքային քանդակների (մեծ և փոքր ձևերի) մշակույթը, դրանց ոճը պետք է հաշվի առնեն քաղաքային միջավայրը, պետք է բացառապես վայելչավոր լինեն նախորդ քանդակագործների ու նկարիչների երկերին: Հենց այսպիսի սահմանափակումների հունով պետք է արարի ամեն մի վարպետ և հենց այս խիստ պայմաններում պետք է սեփական անհատականությունը ցուցաբերի, լիարժեքորեն դրսևորի իրեն: Բայց և այնպես Շիրազին սրտամոտ էր ծեփագործման յուրաձևումը «ճնշված կավով» կամ եվրոպական քանդակագործության որոշ շրջանների ոճաբանությունը: Նա պատմողական չէր, թեև օգտվում էր գրական նյութից: Թեպետ կարող էր և օգտվել, չէ՞ որ նա իր սերնդի մտավորապես ամենակրթված նկարիչներից մեկն էր: Բայց



Զախից աջ – Արա Շիրազ, Ռուբեն Անգալադյան, Արտո Չախմախյան, Էդուարդ Խարազյան, Երևան 2009 թ.

նա իր գիտելիքները հաճախակի չէր ցուցադրում: Մենք զնայվում ենք այնպիսի աշխատանքներով, ինչպիսին Նարեկացին է՝ սավառնող հոգով բանաստեղծի դիմապատկերը, Անտունիի լռությամբ, կենդանի աչքերով ու «խտտող» ձեռքերով միամիտ Պարույր Սևակը (1972)՝ տեղադրված մի սովորական երևանյան դպրոցի առաջ... Հայեր կյանքի այդ թատրոնին՝ այս պարզունակության ու երկերեսանիության միջից, բացահայտե՛ք նրա անհանգիստ, դեզերող ոգու հոգևոր տանջանքները...

Իր ստեղծագործության մեջ նա վերլուծության ավելի բարձր աստիճան է դնում, քան արդարությունն է կամ իրական գեղեցկությունը: Հենց այսպես է առաջանում նրա աշխատանքը, ընկերոջ՝ Լևոն Ներսիսյանի հիանալի դիմապատկերը Երևանի գլխավոր մայրուղու վրա: Բրոնզե գլուխ յուրօրինակ մարդու, որի՝ անտիկ գրականության դասախոսությունները ուսանողներ էին հավաքում մայրաքաղաքի բոլոր բուհերից: Այդ դիմապատկերը, այժմ կարելի է բացեիքաց ասել, նրա ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ ժողովրդի սերնդի հավաքական կերպարն է, ինչն էլ քանդակը վերածում է բուն արտիստի ու բուն երևանցու դիմապատկերի:

Եվ հենց դրա համար էլ Արա Շիրազի կողմից ստեղծված ժամանակակիցների կերպարները համոզում են՝ մեր հոգիներում վստահություն ներշնչելով, որ թեև նրա ստեղծագործական ուղին անսպասելիորեն և բավականին վաղ ավարտվեց, բայց այդ բարդ ճանապարհն ամբողջական է: Եկել է նրա բազմաշերտ ստեղծագործության խոր իմաստավորման ժամանակը: Եկել է ժամանակը, որ Արա Շիրազը իր արժանի տեղը զբաղեցնի 20-րդ դարի 60-ականներից մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակը ձգվող հայկական մշակույթի պատմության մեջ:

Թարգմ. ուսերենից՝ Սիրանուշ Գ. Հովհաննիսյանի

Ռուբեն Ս. Անգալադյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Նոր և Նորագույն ժամանակների հայ գեղանկարչությունն ու քանդակագործությունը: Հրապարակել է բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի և այլ նշանավոր նկարիչների ստեղծագործության վերաբերյալ:

Summary

THE ONE WHO BLESSED LONELINESS

On the occasion of the exhibition of Ara Shiraz

Ruben S. Angaladyan

Key words – Ara Shiraz, exhibition, talent, responsibility, artistic life, artist of the sixties, composition of a sculptural portrait, real beauty, Armenian culture.

The works by sculptor Ara Shiraz that are presented in the National Gallery of Armenia from November 18, 2017 until the end of the year, bear the stamp of an artistic personality. Clay and wax in his works seek and find the power of his mind, the blood of his tribe, the warmth of the soul striving for the future. In his work he puts a higher level of analysis than are just the justice or beauty.

Ara Shiraz saw in Armenia not only the old history, not only the greatness

of the spirit, but also shortcomings and imperfections. He was true to this artistic logic of development, a stony landscape open before the winds, he could argue until he was almost to death with the Time itself, that is, with Armenia itself. So he passed away, with anxiety for his country, for the future and for his culture!

Therefore, the works of Shiraz, in which contemporaries are represented, convince, inspiring confidence in our souls, that although his creative path was unexpectedly and quite early completed, this difficult path was passed to the end. It's time for a deep understanding of his multi-layered work. It's time for Ara Shiraz to take his rightful place in the Armenian culture, beginning from the 60s of the 20th century to the first decade of the 21st century.

Резюме

ТОТ, КТО БЛАГОСЛАВЛЯЛ ОДИНОЧЕСТВО

По случаю выставки Ара Ширази

Рубен С. Ангаладян

Ключевые слова – Ара Шираз, выставка, талант, ответственность, художественная жизнь, художники–шестидесятники, композиция скульптурного портрета, настоящая красота, армянская культура.

Произведения скульптора Ара Ширази, представленные в Национальной галерее Армении с 18 ноября 2017 до конца года, несут печать художественной личности. Глина и воск ищут и находят силу его разума, кровь его пламени, тепло души стремящейся в будущее. В своей работе он ставит более высокий уровень анализа, чем справедливость или красота.

Ара Шираз видел в Армении не только старую историю, не только величие духа, но также недостатки и несовершенство. Он был верен этой художественной логике развития, каменистому пейзажу, открытому перед ветрами, он мог спорить до хрепоты, практически до смерти с самим Временем, то есть с самой Арменией. Так он и ушел из жизни, с тревогой за Родину, за Будущее и за свою Культуру!

И поэтому работы Ширази, в которых представлены современники, убеждают, вселяя уверенность в наши души, что хотя его творческий путь неожиданно и довольно рано завершился, но этот сложный путь был пройден до конца. Пришло время глубокого понимания его многослойной работы. Пришло время, чтобы Ара Шираз занял свое достойное место в армянской культуре, начиная с 60-х годов 20-го века до первого десятилетия XXI века.